ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«23» Դեկտեմբերի 2021թ. N 648/Ա

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44/Մ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N780-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 3-րդ բաժնի 15-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել

1) Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների իրականացման և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների նախագծերի կազմման լիցենզավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների իրականացման և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների նախագծերի կազմման լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N2 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի 2017թ. դեկտեմբերի 25-ի N44/Մ հրամանը:

Լ.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված N 1
ԱՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«23» նոյեմբերի 2021թ. N 698Ա հրամանի

Կ Ա Զ Մ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բեգլար Քարամյան- Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պետ- հանձնաժողովի նախագահ:

Արման Գրիգորյան – Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի վարիչ- հանձնաժողովի անդամ:

Իգոր Թևոսյան- Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի քարտուղար:

Կարեն Ավագյան - Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ԱՀ կթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«23» դեկտեմբերի 2021թ. N 698Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացման ու պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների նախագծերի կազմման (այսուհետ՝ լիցենզիաներ) լիցենզավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

2.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ ապահովել լիցենզավորման գործընթացի իրականացումը:

4. Հանձնաժողովն իր առջև դրված հիմնական խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) քննարկում է լիցենզիաներ ստանալու համար հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը.

2) տալիս է եզրակացություն լիցենզիաներ տրամադրելու, մերժելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ և ներկայացնում նախարարի հաստատմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ լիցենզավորող մարմնին լիցենզավորվող բնագավառի լիցենզավորման օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի նիստերը կարող են իրականացվեն նաև On Line տարբերակով:

6. Հանձանժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում վճռորոշ է նիստը վարողի ձայնը:

8. Հարցերի քննարկման մասին հրավիրված անձին պատշաճ ձևով հայտնվում է քննարկումից ոչ ուշ, քան յոթ օր առաջ՝ տեղեկացնելով նրան քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին:

9. Հանձնաժողովի նիստը նախագահողը նիստի ժամանակ հայտարարում է, թե ինչ հարց է քննարկելու, ովքեր են հրավիրվել քննարկմանը, հարցերի քննարկմանը մասնակցող անձանց բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է հայտի, ինչպես նաև քննարկվող այլ փաստաթղթերի բովանդակությունը:

10. Հարցերի քննարկմանը հրավիրված անձանց չմասնակցելը հիմք չի հանդիսանում հարցերը չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե հրավիրված անձը գրավոր չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամանակ: Հրավիրված անձի սույն կետով նախատեսված խնդրանքը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով և, եթե քննարկումը հետաձգելիս չեն խախտվի օրենքով նախատեսված քննարկման ժամկետները:

11. Հրավիրված անձն իրավունք ունի քննարկմանը մասնակից դարձնել մասնագետի, փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի: Հրավիրված անձը կամ նրա շահերի պաշտպաններն իրավունք ունեն ելույթներ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին, հարուցել միջնորդություններ:

12. Հարցերի քննարկումները կատարվում են դռնբաց: Դռնփակ են քննարկվում այն հարցերը, որոնք վերաբերվում են պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններին: Հրավիրված անձի պահանջով քննարկումը կարող է կատարվել դռնփակ, եթե հարցերի քննարկման ժամանակ բացահայտվելու են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դռնբաց քննարկվող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել լրագրողներ, մասնագետներ, այլ անձինք:

13. Հանձնաժողովի որոշումը կայացվում է հարցի քննության ավարտից հետո՝ դռնփակ: Հանձնաժողովի կողմից որոշման կայացման ժամանակ այդ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:

14. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

2) հանձնաժողովի կազմը,

3) քննարկվող հարցի բովանդակությունը,

4) տեղեկություններ քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

5) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

6) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը:

15.Հանձնաժողովի եզրակացությունները հրապարակվում են և պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում են հրավիրված անձին:

16. Հանձնաժողովի եզրակացությունն այն կայացնելու օրը հանձնվում է լիցենզավորող մարմնի ղեկավարին:

17.Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են նիստի նախագահողը և քարտուղարը:

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և դրանց գործունեության հետ առնչվող մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

4) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

19.Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա պարտականությունները:

20.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի հերթական նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցի մասին՝ նիստի օրվանից առնվազն յոթ օր առաջ,

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

4) նախապատրաստում է առաջարկություններ հանձնաժողովի աշխատանքային ծրագրի կազմման և կատարման վերաբերյալ,

5) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում վերջինիս գործունությանը վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկությունները, նախապատրաստում առաջարկություններ դրանց վերաբերյալ,

6) կազմում է հանձնաժողովի որոշումների նախագծերը, եզրակացությունները և կազմակերպում հանձնաժողովի որոշումների սահմանված ձևով հանձնումը կամ ուղարկումը հայտատուին:

21.Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում, հանձնաժողովի անդամներից մեկը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ստանձնում է հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները:

22. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, հանձնաժողովի աշխատանքային պլանների մշակման և դրանց իրականացման հետ կապված աշխատանքներին,

2) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

23.Հանաձնաժողովի գործունեությունը դադարում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24.Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո հանձնաժողովի գործունեությանը առնչվող փաստաթղթերը և այլ նյութերը ենթակա են պահպանման Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Շ. ՍԱՐԳՍՅԱՆ